ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 5
«ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-23-26/2» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԳՆՄԱՆ
ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան

15-ը մարտի 2023թ.
ժամը $10^{45}$

Ընդունել ի գիտություն, որ «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-23-26/2» ծածկագրով ընթացակարգի հայտերի բացումն իրականացվել է 07.03.2023թ.-ին՝ Armeps (www.armeps.am) համակարգի միջոցով: Հանձնաժողովը մասնակիցների կողմից ներկայացված հայտերն ուսումնասիրելուց հետո աշխատանքները շարունակեց 13.03.2023թ.-ին:
Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու (ԳԱՊ)՝
ՀՀ ՊՆ ՆՏԱ ԳՎ ԹԱ վարչության պետ Հ. Մելիքյանը,
գնահատողներ՝
ՀՀ ԶՈւ ԳՇ ռազմանվագախմբային ծառայության պետ-զինվորական դիրիժոր, գնդապետ Հ. Գրիգորյանը,
ՀՀ ԶՈւ ԳՇ ռազմանվագախմբային ծառայության պետի տեղակալ-զինվորական դիրիժոր, մայոր Ա. Սիմոնյանը,
Հանձնաժողովի քարտուղար՝
ՀՀ ՊՆ գնումների կազմակերպման վարչության ԳԿ 3-րդ բաժնի գլխավոր մասնագետ Մ. Հոխեյանը:
Բացակայում է՝ ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչության ԹԱ վարչության ապահովման 2-րդ բաժնի ավագ մասնագետ Ն. Գևորգյանը:

Ի գիտություն «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-23-26/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հայտերում առկա անհամապատասխանությունների շտկման նիստին /13.03.2023թ./ մասնակցում էին՝ նախագահ՝ Հ. Մելիքյանը, գնահատողներ՝ Հ. Գրիգորյանը, Ա. Սիմոնյանը և Ն. Գևորգյանը, իսկ ամփոփման և գնահատման նիստերին մասնակցում էին նախագահ՝ Հ. Մելիքյանը, գնահատողներ՝ Հ. Գրիգորյանը և Ա. Սիմոնյանը, բացակայում էր՝ Ն. Գևորգյանը /15.03.2023թ./, սակայն վերջինիս կողմից Armeps (www.armeps.am) համակարգում իրականացվել է «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-23-26/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հայտերի էլեկտրոնային գնահատումը:

«ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-23-26/2» ծածկագրով գնանշման հարցման (ԳՀ) ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Մ. Հոխեյան)

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտեր ներկայացրած Մասնակիցների մասին.
2. «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-23-26/2» ծածկագրով ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ Մասնակիցների ներկայացրած փաստաթղթերի՝ ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխան կազմված լինելու մասին.
3. Մասնակիցների առաջարկած գները ըստ չափաբաժինների և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.
4. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա ըստ չափաբաժինների «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-23-26/2» ծածկագրով ԳՀ ընթացակարգի ընտրված մասնակիցների որոշման մասին և այդպիսին չճանաչված մասնակիցների որոշման մասին.
5. Տեղեկություններ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.
6. Տեղեկություններ հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացվելու վերաբերյալ:

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4 դեմ՝ 0:*

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտեր ներկայացրած Մասնակիցների մասին.

(Մ. Հոխեյան)

1.1 ՀՀ ՊՆ կարիքների համար *«Երաժշտական գործիքների»* ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-23-26/2» ծածկագրով ընթացակարգին սահմանված ժամկետում էլեկտրոնային հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

| Հ/հ | Մասնակիցների անվանումները |
|---|---|
| 1 | «ԷՍ ԷՍ ԷՅՋ ԷՅՋ» ՍՊԸ |
| 2 | «ՊՌՈ ԻՆՎԵՍՏ» ՍՊԸ |

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:*

2. «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-23-26/2» ծածկագրով ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ Մասնակիցների ներկայացրած փաստաթղթերի՝ ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխան կազմված լինելու մասին.

(Մ. Հոխեյան)

2.1 Մասնակիցների էլեկտրոնային հայտերը էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգի կողմից համարվել են հետագա գնահատման համար ընդունելի:

2.2 Մասնակիցների էլեկտրոնային հայտերում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերն առկա են, սակայն արձանագրել են անհամապատասխանություններ, մասնավորապես.

- «ԷՍ ԷՍ ԷՅՋ ԷՅՋ» ՍՊԸ կողմից ներկայացված հայտի Հավելված N 1-ի առաջին կետում նշված է մասնակցության իրավունքի պահանջներին բավարարման վերաբերյալ մասնակցի հավաստումը, այնինչ վերոնշյալ ընթացակարգի հրավերի Հավելված N 1-ի առաջին կետում նշվում է մասնակցի և իրեն փոխկապակցված անձանց մասնակցության իրավունքի պահանջներին բավարարման վերաբերյալ հավաստումը: Ուստի անհրաժեշտ է Հավելված N 1-ը ներկայացնել հրավերի պահանջներին համապատասխան:

- «ՊՌՈ ԻՆՎԵՍՏ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում կցված չէ /բացակայում է/ «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-23-26/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով պահանջվող իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը կամ իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ պարունակող կայք էջի հղումը:

2.3 Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ 13.03.2023թ. կայացած նիստում գնահատող հանձնաժողովը որոշեց մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը, իսկ գնահատող հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգի միջոցով ծանուցեց «ԷՍ ԷՍ ԷՅՋ ԷՅՋ» ՍՊԸ-ին և «ՊՌՈ ԻՆՎԵՍՏ» ՍՊԸ-ին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում /14.03.2023թ./ շտկել վերը արձանագրված անհամապատասխանությունները:

2.4 15.03.2023թ.-ին կայացած նիստում գնահատող հանձնաժողովն արձանագրեց, որ սահմանված ժամկետում «ԷՍ ԷՍ ԷՅՋ ԷՅՋ» ՍՊԸ-ի և «ՊՌՈ ԻՆՎԵՍՏ» ՍՊԸ-ի կողմից շտկվել են վերը արձանագրված անհամապատասխանությունները և վերջիններիս կողմից ներկայացված հայտերը գնահատվեցին «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-23-26/2» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխան:

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:*

3. Մասնակիցների առաջարկած գները ըստ չափաբաժինների և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.

(Մ. Հոխեյան)

3.1 * «Գնումների մասին» ՀՀ օրենսդրության և սույն ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխան ըստ չափաբաժինների գնային առաջարկ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

| Հ/բ | Ապրանքի անվանումը | Չ/մ | Քանակ | Միավորի գին /ՀՀ դրամ/ | Նախահաշվային գին /ՀՀ դրամ/ | «ԷՍ ԷՍ ԷՅՋ ԷՅՋ» ՍՊԸ | | | «ՊՌՈ ԻՆՎԵՍՏ» ՍՊԸ | | | Ընտրված մասնակից |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | Արժեքը /ՀՀ դրամ/ | ԱԱՀ /ՀՀ դրամ/ | Ընդհանուր գինը /ՀՀ դրամ/ | Արժեքը /ՀՀ դրամ/ | ԱԱՀ /ՀՀ դրամ/ | Ընդհանուր գինը /ՀՀ դրամ/ | |
| 1 | Փողային գործիքներ /Տուբա Էս/ | հատ | 2 | | | 2 915 000 | 583 000 | 3 498 000 | 5 500 000 | – | 5 500 000 | «ԷՍ ԷՍ ԷՅՋ ԷՅՋ» ՍՊԸ |
| 2 | Հարվածային գործիքներ /Փոքր թմբուկ/ | հատ | 2 | | | --- | --- | --- | 800 000 | – | 800 000 | «ՊՌՈ ԻՆՎԵՍՏ» ՍՊԸ |
| 3 | Հարվածային գործիքներ /Մեծ թմբուկ/ | հատ | 2 | | | 1 048 333.33 | 209 666.67 | 1 258 000 | 2 800 000 | – | 2 800 000 | «ԷՍ ԷՍ ԷՅՋ ԷՅՋ» ՍՊԸ |

*Ի գիտություն ընթացակարգը կազմակերպվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին կետի հիման վրա:*

3.2 Մասնակիցների գնային առաջարկների հաշվարկման ճշտությունը /հայտերով ներկայացված գնային առաջարկների թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը/, ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունները համապատասխանում են /ճիշտ են/: Ըստ ներկայացված տվյալների՝ *«ԷՍ ԷՍ ԷՅՋ ԷՅՋ» ՍՊԸ-ն ԱԱՀ վճարող է, իսկ«ՊՌՈ ԻՆՎԵՍՏ» ՍՊԸ-ն ԱԱՀ վճարող չէ:*

3.3 *«ՊՌՈ ԻՆՎԵՍՏ» ՍՊԸ կողմից հայտով ներկայացված հավելված 2-ում*՝ գնային առաջարկում 3-րդ չափաբաժնի մասով գնման առարկայի անվանումը սխալ է նշված */Փոքր թմբուկ/*, սակայն «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-23-26/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով՝ 3-րդ չափաբաժնի մասով գնման առարկայի անվանումը սահմանված է՝ *Հարվածային գործիքներ /Մեծ թմբուկ/*, ինչը էլ հիմք ընդունելով գնահատող հանձնաժողովը որոշեց *«ՊՌՈ ԻՆՎԵՍՏ» ՍՊԸ կողմից ներկայացված հայտը 3-րդ չափաբաժնի մասով գնահատել հրավերի պահանջներին անբավարար և մերժել:*

3.4 «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-23-26/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում բանակցություններ չեն վարվել:

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:*

4. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա ըստ չափաբաժինների «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-23-26/2» ծածկագրով ԳՀ ընթացակարգի ընտրված մասնակիցների որոշման մասին և այդպիսին չճանաչված մասնակիցների որոշման մասին.

(Մ. Հոխեյան)

4.1 15.03.2023թ.-ին՝ հայտերի բացման և գնահատման նիստի ավարտի օրը, Armeps (www.armeps.am) համակարգում էլեկտրոնային գնահատման արդյունքում ըստ չափաբաժինների հաստատվել է ընթացակարգի բոլոր մասնակիցների կողմից ներկայացված հայտերի՝ հրավերի պահանջներին համապատասխանության գնահատման արդյունքները և գնահատող հանձնաժողովի կողմից՝ ընթացակարգի հրավերի պահանջներին բավարար գնահատված գնային առաջարկների հիման վրա «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-23-26/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի 1-ին և 3-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից ճանաչվեց՝ «ԷՍ ԷՍ ԷՅՋ ԷՅՋ» ՍՊԸ-ն, իսկ 2-րդ չափաբաժնի մասով «ՊՌՈ ԻՆՎԵՍՏ» ՍՊԸ-ն: Բավարար գնահատված մյուս մասնակիցը ճանաչվեց այդպիսին չճանաչված մասնակից՝ ըստ համապատասխան չափաբաժնի համար ներկայացրած գնային առաջարկի:

4.2 Գնահատող հանձնաժողովը որոշեց հրապարակել «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-23-26/2» ծածկագրով ընթացակարգի հայտերի բացման և գնահատման նիստի արդյունքները:

4.3 Գնահատող հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-23-26/2» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել այն:

4.4 Սույն ընթացակարգում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն կիրառվում է տասնօրյա անգործության ժամկետ:

4.5 Գնահատող հանձնաժողովը որոշեց «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-23-26/2» ծածկագրով ընթացակարգի ընտրված մասնակիցներին՝ պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ և 36-րդ հոդվածների պահանջները:

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:*

5. Տեղեկություններ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.

(Մ. Հոխեյան)

5.1 Մասնակիցների կողմից հայտերի վերաբերյալ հարցումներ չեն կատարվել:

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:*

6. Տեղեկություններ հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացվելու վերաբերյալ
(Մ. Հոխեյան)

6.1 «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-23-26/2» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ չեն ներկայացվել:

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:*

| | |
|---|---|
| Գնահատող (ԳԱՊ) | Հ. Մելիքյան |
| Գնահատող | Հ. Գրիգորյան |
| Գնահատող | Ա. Սիմոնյան |
| Գնահատող | Ն. Գևորգյան |
| Հանձնաժողովի քարտուղար՝ | Մ. Հոխեյան |